ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-26/3» ծածկագրով գնման ընթացակարգի[1] գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ

մեկնարկ՝ 18.12.2025թ.
ժամը 16:00
ավարտ՝ 14.01.2026թ.
ժամը 10:30

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության կազմատնտեսական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)	Սարգիս Սայադյան

Հանձնաժողովի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության փորձագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Կարեն Մուշեղյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Աննա Վարդանյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավախորհրդատու (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Լաուրա Գևորգյան
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համայնքային տեղեկատվական հոսքերի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Եղիազար Դավթյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)	Զանուշ Հայրապետյան

«ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-26/3» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ:
2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին:
3. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:
4. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի գնային առաջարկի մասին:
5. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ Ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ Հրավեր) սահմանված վավերապայմաններին համապատասխան լինելու մասին:
6. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու մասին:
7. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված ծառայությունների բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

[1] Սույն գնումն իրականացվում է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի և 22-րդ հոդվածի՝ գնանշման հարցում ընթացակարգով:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գները.

Չափաբաժնի			Չափաբաժնի անվանումը
համարը	գնման գինը	հրավերով սահմանված միավոր ծառայությունների գների հանրագումարը*	
1	667 000	624 300	Անձնական համակարգիչների վերանորոգման ծառայություններ
2	800 000	231 000	Էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ
3	650 000	335 300	Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ

** գնային առաջարկը ներկայացվում է հրավերով սահմանված միավոր ծառայությունների տեսակների համար մասնակցի ներկայացրած գների հանրագումարի չափով, պայմանագիրը կնքվում է հրավերով նախատեսված գնման գնի չափով:*

2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

2.1 Ընթացակարգի հայտը Armeps (www.armeps.am) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով բացվել է սահմանված ժամկետում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝ 2025 թվականի դեկտեմբերի 18-ին՝ ժամը 16:00-ին:

3. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ

3.1 Սահմանված կարգով ներկայացված հայտերը, որենք ընդունվել են Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգի կողմից և համարվել հետագա գնահատման համար ընդունելի 6-ն են:

3.2 Ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները՝

№	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	ՀՎՀՀ	Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար
1	Մանվել Ջալավյան Արշավիրի ԱՁ	ք. Երևան, Մոսկովյան փ. 25, 3/1 տարածք	82934656	geek.service@yahoo.com Հեռ. +374 98 887 114, +374 010 544 193
2	«Այ Սերվիս» ՍՊԸ	ք. Երևան, Չարենց 66	00124361	tenderiservice@gmail.com Հեռ. +374 96 552 624
3	Բենիամին Դալլաքյան ԱՁ	ք. Երևան, Մայիսի 9, 11$_2$	26509512	armtiko02@mail.ru Հեռ. +374 94 444 556
4	«ՊՄՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	Նոր Նորք 6 Լյուքսեմբուրգ 15	01040706	info@pmservice.am Հեռ. +374 94561567
5	«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ	ք. Երևան, Բաբաջանյան 103$_2$., բն11	02228296	magistral.nakhagits@yahoo.com Հեռ. +374 77 207495
6	«ՋԻԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան, Դավթաշեն 4 թաղ 34$_2$ բն17	00127455	g-agroup@mail.ru Հեռ.+374 98 569095

4. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին

4.1 Ընթացակարգի շրջանակներում յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը.

Չափաբաժին 1: Անձնական համակարգիչների վերանորոգման ծառայություններ

№	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	**Բենիամին Դալլաքյան ԱՁ**	**262 100**	**0**	**262 100**
2	«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ	314 982	0	314 982
3	Մանվել Ջալավյան ԱՁ	355 851	0	355 851
4	«Այ Սերվիս» ՍՊԸ	530 655	0	530 655
5	«ՋԻԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	561 870	0	561 870
6	«ՊՄՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	607 300	0	607 300

Չափաբաժին 2: Էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ

№	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	**Մանվել Ջալավյան ԱՁ**	**164 010**	**0**	**164 010**
2	«ՋԻԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	207 900	0	207 900

Չափաբաժին 3: Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ

№	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	**«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ**	**127 414**	**0**	**127 414**
2	Բենիամին Դալլաքյան ԱՁ	136 500	0	136 500
3	«Այ Սերվիս» ՍՊԸ	150 885	0	150 885
4	Մանվել Ջալավյան ԱՁ	150 885	0	150 885
5	«ՋԻԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	201 180	0	201 180
6	«ՊՄՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	307 800	0	307 800

4.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

5. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ Հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան լինելու մասին:

5.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ.

- Բենիամին Դալլաքյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն Ընթացակարգի հրավերով սահմանված պայմանների (պահանջների) նկատմամբ՝ Դիմում հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ Պատվիրատուի անվանումը, Ընթացակարգի ծածկագիրը, 2-րդ կետում լրացված գնման ձևը չեն համապատասխանում Հրավերին, բացակայում է 3-րդ չափաբաժնին մասնակցության հավաստումը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

1) Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով և հիմք ընդունելով արձանագրված անհամապատասխանությունը՝ Ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստը 12.01.2026թ.-ին մեկ աշխատանքային օրով կասեցնել և առաջարկել Բենիամին Դալլաքյան ԱՁ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

2) Գնահատող հանձնաժողովի նիստը վերսկսել ս.թ. հունվարի 14-ին՝ ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

6. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու մասին

6.1 Ընդունել ի գիտություն, որ Բենիամին Դալլաքյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունը շտկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

6.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով գնահատման արդյուքները հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

7. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

7.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

7.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

8.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները Ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչել՝

- 1-ին չափաբաժնի մասով՝ Բենիամին Դալլաքյան ԱՁ-ին,
- 2-րդ չափաբաժնի մասով՝ Մանվել Ջալավյան ԱՁ-ին,
- 3-րդ չափաբաժնի մասով՝«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին:

8.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Ընթացակարգի անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

8.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

8.4 Ընթացակարգի ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5 դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրությունները՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Սարգիս Սայադյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Կարեն Մուշեղյան**	.....
	Աննա Վարդանյան	.....
	Լաուրա Գևորգյան	.....
	Եղիազար Դավթյան	.....
Քարտուղար՝	**Զանուշ Հայրապետյան**	.....